# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ,ՀՈՌՈՄ,ՀՈՎՏԱՇԵՆ,ԼՈՒՍԱԿԵՐՏ,ՄԵՂՐԱՇԵՆ,ՆՈՐ ԿՅԱՆՔ,ՓԱՆԻԿ,ՍԱՐԱՏԱԿ,ՎԱՐԴԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՇԻՐԱԿ -11 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

?????????  ?????????????? ?????? ???? ????? ??????? ??????????  h??????? 1

???? 374  244 52021, 374  244 52490  ???????? ?????? 3001, ??. ?????artikmun@mail.ru, ???, ????? www. ar


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ի 2026 թվականի N -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ,ՀՈՌՈՄ,ՀՈՎՏԱՇԵՆ,ԼՈՒՍԱԿԵՐՏ,ՄԵՂՐԱՇԵՆ,ՆՈՐ ԿՅԱՆՔ,ՓԱՆԻԿ,ՍԱՐԱՏԱԿ,ՎԱՐԴԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՇԻՐԱԿ -11 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի4-ի թիվ 2-2,թիվ 2-3 և թիվ 2-4 դրական եզրակացությունները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2026 թվականի հունվարի 30-ի թիվ N01//00652-2026 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագինին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1?Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան,Հոռոմ**,**Հովտաշեն,Լուսակերտ,Մեղրաշեն,Նոր Կյանք, Փանիկ, Սարատակ, Վարդաքար բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի գոտևորման նախագիծը՝ համաձայն հավելվածի:

2?Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 20-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Անուշավան, Հոռոմ, Հովտաշեն, Լուսակերտ, Մեղրաշեն, Նոր Կյանք, Փանիկ, Սարատակ, Վարդաքար բնակավայրերի միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-11 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի գոտևորման նախագիծը հաստատելու մասին» N54-Ա որոշումը: